ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գ.Ա.ԳԱԼՈՅԱՆ, Հայաստանը և մեծ պետությունները 1917 – 1923թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 1999, 539 էջ:

Վերջին տասնամյակում հայ պատմագրությունը իր սևեռուն ուշադրության առանցքում է պահում Հայաստանի Առաջին հանրապետության կազմավորման և անկման, Արևելյան Հայաստանի տարածքում Թուրքերի կողմից շարունակվող ցեղասպանության, միջազգային անչափ բարդ ու խառնակ մթնոլորտում Հայկական հարցի զարգացման հետ կապված դրամատիկ արծարծումները, ինչպես նաև հայ ժողովրդի նկատմամբ մեծ տերությունների վարած երկդիմի քաղաքականության հետևանքների ու դասերի անաչառ քննությունը;

Այս առումով կարևոր ու հիմնարար մի աշխատություն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Ա.Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917 – 1923թթ.» մենագրությունը, որը լույս է ընծայել «Գիտություն» հրատարակչությունը: Գրքի խմբագիրն է ակադեմիկոս Վ.Միքայելյանը: Այն տպագրության է երաշխավորվել ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտխորհրդի կողմից:

Ներածականում հեղինակը նշում է, որ սույն մենագրությունը բաղկացած է երկու գրքից: Առաջին գիրքն ընդգրկում է XVI դարից մինչև 1917թ. ընկած ժամանակաշրջանը, երբ Հայաստանը բռնի բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև, և ծայր առան հայոց ազգային-ազատագրական դեգերումները՝ հայրենիքի վերամիավորման և հայկական պետականությունը վերաստեղծելու համար: Սակայն հաշվի առնելով հայոց պատմության նորագույն շրջանի՝ 1917 – 1923թթ. բարդ ու կնճռոտ հարցերի ու հարցականների նորովի լուսաբանման անհրաժեշտությունը, նախընտրելի է համարվել նախ և առաջ հրատարակել մենագրության այս՝ երկրորդ գիրքը:

Աշխատության կարևորագույն արժանիքներից մեկը աղբյուրագիտական լայն բազան է: Հեղինակը շրջանառության մեջ է դրել բազմաթիվ նորահայտ նյութեր ու փաստաթղթեր, որոնք հայտնաբերել է Մոսկվայի, Լոնդոնի և Վաշինգտոնի արխիվներում աշխատելու ընթացքում: Ընդ որում, ընդգծվում է, որ հատուկ միտվածությամբ լայն տեղ է տրված փաստական նյութի ներկայացմանը, ղեկավարվելով այն իրողությամբ, որ միայն փաստաթղթերի ու իրադարձությունների համադրմամբ է հնարավոր հստակ, ճշգրիտ պատկերացում կազմել 1917 – 1923 թթ. վիճահարույց, հաճախ՝ նաև անքննելի և անլուծելի թվացող հարցերի մասին:

Քննելով Հայաստանի Հանրապետության կազմավորումը միջազգային դիվանագիտական բարդ անցուդարձի պայմաններում՝ հեղինակը անհրաժեշտ խորությամբ գնահատում է այն բոլոր գործոնները, որոնք առնչվում են տարածաշրջանում և ողջ աշխարհում Հայկական հարցի արծարծումներին և զարգացումներին՝ հատակորեն մատնանշելով այն իրողությունը, որ Ռուսաստանում բոլշևիկների հաղթանակից հետո Անտանտը Մերձավոր արևելքում տեղի ունեցող իրադարձությունները գնահատում և կարևորում էր լոկ բոլշևիկյան շարժմանը դիմակայելու տեսանկյունից: Մնացած հարցերը, այդ թվում և ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի՝ իրենց փոքրիկ դաշնակցի ազատ հայրենիք ունենալու հարցականները, ածանցյալ էին: Անտանտի տերությունները ոչ միայն անհրաժեշտ միջոցներ չկիրառեցին ապահովելու հրաշքով ողջ մնացած հայության անվտանգությունը, այլև անթույլատրելի թողտվությամբ ակամայից խրախուսեցին

թուրքական բանակներին, որոնք 1918թ. սկզբներին անցան հարձակման, գրավեցին և Արևմտահայաստանը և Արևելահայաստանի զգալի մասը:

Աշխատության էջերում պարզորոշ գծագրվում են հայ ժողովրդի ապրած նոր ողբերգության պատմաքաղաքական մեխանիզմն ու դրամատիզմը: Աշխարհաքաղաքական փոթորկումների ծովում հայ ժողովուրդը կրկին մեն-մենակ ու անօգնական գտնվեց: Իրավ է այն դիտարկումը, որ իր գոյության առաջին իսկ օրից մի փոքր հողակտորի վրա ամփոփված Հայաստանի Հանրապետությունն անհավասար գոտեմարտի մեջ մտավ ոչ միայն իր անմիջական հարևանների՝ Թուրքիայի, մուսավաթական Ադրբեջանի և մենշևիկյան Վրաստանի հետ, այլև, ըստ էության, բոլոր այն մեծ տերությունների հետ, որոնք Անդրկովկասում հետամուտ էին իրենց աշխարհակալական շահերին: Սուր հակամարտության մեջ էին գտնվում Գերմանա-թուրքական համադաշնության և Անտանտի շահերը, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր ավարառել Կովկասյան տարածաշրջանը: Պատերազմից դուրս եկած Խորհրդային Ռուսաստանը նույնպես չէր կարող հաշտվել Անդրկովկասը կորցնելու մտքի հետ:

Քննելով տարածաշրջանում ստեղծված անչափ բարդ իրավիճակը՝ հեղինակը մեկ առ մեկ բացահայտում է արևմտյան ուժերի, մասնավորապես անգլիական դիվանագիտության հակահայկական խարդավանքները և հեռուն գնացող ադրբեջանամետ ու թուրքամետ քաղաքականության իսկական էությունը: Մի քաղաքականությո՛ւն, որը հանգեցրեց Հայաստանի լիակատար մեկուսացմանը և նրանից Արցախի ու Նախիջևանի երկրամասերի անջատմանը: Եվ այս ամենը բացահայտվում է կոնկրետ փաստերով, արևմտյան տերությունների դիվանագիտական գործակալների նորահայտ զեկուցագրերի ու հաղորդումների վկայակոչումով: Աշխատության ամենակարևոր բաժիններից է «Սևրի պայմանագիրը: Մեծ տերությունների խարդավանքները» գլուխը, որում բոլորովին նոր հայեցակետով, նոր դիտանկյունից են քննարկվում տեղի ունեցած հայտնի իրադարձությունները: Աշխատության հեղինակի խորին համոզմամբ, ստեղծված պայմաններում, երբ եվրոպական դիվանագիտությունն արդեն իսկ փոխել էր իր դիրքորոշումը Թուրքիայի նկատմամբ, Սևրի պայմանագիրը ծնվում էր «մեռելածին» վիճակում, քանի որ պայմանագիրը ստորագրած խոշոր տերություններից և ո՛չ մեկը առանձնապես հավատացած չէր, որ նրա հոդվածները կարող էին իրագործվել: Այդ պայմանագրի ստորագրումը չէր վկայում, թե հարթվել էին դաշնակից տերությունների՝ Փոքր Ասիայում գոյություն ունեցող տարաձայնությունները, այլ, ընդհակառակը, դրանք ավելի էին հստակեցվել և դարձել անհաղթահարելի: Այս առումով է իմաստավորվում Ֆրանսիայի նախագահ Ռ.Պուանկարեի այն պնդումը, թե Սևրի պայմանագիրը նմանվում էր մի «կոտրած սկահակի», և իզուր էին այդ պայմանագրի կողմնակիցներն ուրախանում, իսկ հակառակորդները՝ վրդովվում (էջ 279): Հեղինակը նշում է, որ թերևս այդ փաստի գիտակցումն էր, որ պայմանագիրը ստորագրած Կ.Պոլսի թուրքական կառավարությանը թույլ տվեց հանդիսավորությամբ նշել վերոնշյալ պայմանագրի ստորագրումը, մահուդի տակ դնելով նրա վավերացումը:

Մինչև վերջ բացահայտելով սևրյան դավադրության թաքուն շերտերը ակադ. Գ.Գալոյանը ընդգծում է, որ դաշնակից տերություններից ոչ մեկը իրական մտադրություն չուներ զորքեր ուղարկել Արևմտյան Հայաստան, ուստի և պարզ էին այդ պայմանագրի անիրագործելիությունն ու անկենսունակությունը: Այն լոկ Արևմտահայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային

ճանաչման ակտ էր և ոչ ավելին, քանզի ցեղասպանության խորշակից հազիվհազ ոտքի կանգնող հայ ժողովուրդն ու նրա պետությունն անհրաժեշտ ուժեր չունեին իրենց պատմական բնօրրանին զենքի ուժով տեր կանգնելու համար: Այս մտայնությունը լավագույնս արտահայտել է Հայաստանում դաշնակից երկրների գերագույն կոմիսար, գնդապետ Հասկելը, որը դեռևս 1920թ. հունիսի 24-ին ԱՄՆ-ի պետական դեպարտամենտին հասցեագրած հաղորդագրությունում հետևյալն է ընդգծում. «Պարոն Վիլսոնը կարող է գծել Հայաստանի սահմանները, բայց աշխարհի այս մասում ոչ մեկը ուշադրություն չի դարձնի դրան, քանի դեռ այն չի պաշտպանվի ուժով» (էջ 286):

Աշխատության բավական փաստառատ նյութը բացում է փակագծերն այն իրողության, թե ինչպես եվրոպական տերությունները քաղաքական նոր իրավիճակի հրամայականով հրաժարվեցին Ասիական Թուրքիան բաժանելու տաք-տաք պլաններից և խաչ քաշեցին հայ ժողովրդի պատմական իրավունքների վրա: Անվանի Գիտնականը իրավացիորեն նշում է, որ թեև Սևրի պայմանագիրը պաշտոնապես չեղյալ հայտարարված չէր, սակայն դաշնակիցները Հայաստանի և հայ ժողովրդի իրավունքների մասին արդեն խոսում էին որպես հուշի: Փոխելով երեկվա իրենց հակաթուրքական ուղեգիծը, մեծ տերություններից յուրաքանչյուրը ձգտում էր Թուրքիայից ստանալ իր բաժին վարձատրությունը: Ակադեմիկոս Գ.Գալոյանի այս աշխատությունում պատմահամեմատական բազմապիսի քննության են ենթարկվում նաև բազմաթիվ վիճահարույց հիմնահարցեր, ինչպես Արևմտյան Հայաստանը Թուրքական կայսրությունից ամբողջությամբ անջատելու և Հայաստանի մանդատը որևէ մեծ պետության հանձնելու խնդիրը դաշնակից տերությունների ծրագրերում, ԱՄՆ-ի նախագահի և կոնգրեսի դիրքորոշումները Հայաստանի մանդատը ստանձնելու հարցում, հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում 1920թ. ամռանը և օգոստոսի 10-ի համաձայնագիրը, Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի բանակցությունները 1920թ. ամռանը, «ռուս-թուրքական պայմանագրի օգոստոսի 24-ի նախագիծը», Հայ-ռուսական հաշտության պայմանագրի 1920թ. հոկտեմբերի 28-ի նախագիծը և այլն:

«Պատասխանատվության արձանագրում» խորագրով տպավորիչ վերջաբանում հեղինակը, հանրագումարի բերելով իր աշխատության հիմնական դրույթները, նշում է, որ XIX – XX դդ. Հայ դատն իրավական լուծում չստացավ: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ չկային պատմական, իրավական, ազգային ու բարոյական կովաններ, այլ Հայ դատի լուծմանը խոչընդոտող գլխավոր պատճառը մշտապես գործող Թուրքական գործոնն է եղել: Ամեն անգամ, երբ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության ասյան է բարձրացել, դեմ է առել Թուրքիայում այս կամ այն խոշոր տերության (հաճախ՝ տերությունների խմբերի) հետապնդած շահերին: Իսկ միջազգային քաղաքական ասպարեզում միշտ ու մշտապես շարժիչ ուժը եղել է շահը, կողմնացույցը՝ ուժերի փոխհարաբերությունները:

Գ.Գալոյանի մենագրությունը մնայուն արժեք է հայ պատմագրության մեջ, որի արդիական նշանակությունը հիմնավորվում է ոչ միայն թեմայով, այլև դրա ներհուն հետազոտությամբ:

Ա.Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու